ած են, մի խօսքով, ինչ չարիքների մէջ ասէք, չեն զրպարտում մեզ: Բայց հաւատացած եղէք, որ քրիստոնեաների վիճակը աւելի լաւ է, քան է մահմեդականներինը: Մեր երկրում ամէն տեղ քրիստոնեաներին առաւելութիւն են տալիս: Մենք նրանց ազատել ենք շատ պարտաւորութիւններից, որ կատարում են միայն մահմեդականները, օրինակ, զինորագրութիւնից, որ նրանց շատ ծանր է թւում: Ես ինքս առանձին հոգ եմ տանում, իմ կառավարութեանը յանձնուած երկրում, քրիստոնեաների վիճակը բարւոքելու համար, որպէսզի նրանց բեռը աւելի թեթեւ լինի եւ նրանց ապրուստը աւելի ապահով լինի: Շնորհակալ եմ, որ քրիստոնեաները իրանց կողմից հասկանում են իմ նրանց մատուցած ծառայութիւնները, եւ ամիս չէ անցնում, որ իրանց երախտագիտութիւնը չարտայայտէին, որտեղ որ հարկն է: Ձեզ այս րոպէին ցոյց կը տամ, պարոն բժշկապետ, մի նոր հանրագիր, որ պատրաստուած է երկու օրինակ, մէկը Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը ուղարկելու համար, միւսը՝ Բարձրագոյն Դուռը ուղարկելու համար: Դրանց մէջ հայ հասարակութիւնը, հազարաւոր ստորագրութիւններով, յայտնում է իր խորին գոհունակութիւնը իմ կառավարութիւնից եւ, միեւնոյն ժամանակ, ցոյց է տալիս իր բախտաւոր դրութիւնը եւ բարօրութիւնը:

Նա հրամայեց սպասաւորին, որ ոտքի վրայ կանգնած էր իր մօտ, բերել իր թղթապահը: Նրա միջից դուրս հանեց մի քանի թերթեր, ծածկուած բազմաթիւ կնիքներով եւ ստորագրութիւններով, որոնց մէջ առաջին տեղը բռնում էր հայոց հոգեւոր առաջնորդի կնիքն ու ստորագրութիւնը, յետոյ դրուած էին զանազան հայ բեկերի, էֆենդիների եւ նշանաւոր անձինքների ստորագրութիւնները:

Այդ թղթերը ոչ սակաւ զարմացրին թէ Ասլանին եւ թէ ինձ: Բայց երբ վերադարձանք տուն, վարպետ Փանոսը բացատրեց մեզ, թէ որպիսի պղտոր աղբիւրներից էին բխում այս տեսակ շնորհակալութիւնները...

Փաշան, կարծելով, թէ լաւ ազդեցութիւն գործեցին ցոյց տուած թղթերը իր հիւրի վրայ, շարունակեց.

— Մենք շատ պիտի ամաչէինք քաղաքակիրթ Եւրոպայի առջեւ, պարոն բժշկապետ, որ այժմեան լուսաւոր դարում մեր երկրում ազգերի եւ կանոնների խտրութիւն լինէր, որ մենք հալածէինք քրիստոնեային, որովհետեւ նա մեր ազգին եւ կրօնին չէր պատկանում: Իրաւ է, որ մեր մահմեդական ժողովուրդը դեռ ոչ բոլորովին թօթափել է վաղեմի նախապաշարմունքը, նա դեռ բաւական մոլեռանդ է մնացել: Բայց որտե՞ղ չկայ այդ մոլեռանդութիւնը: Մինչեւ այսօր, լուսաւոր Եւրոպայում անգամ, տեղ-տեղ հալածւում են հրէաները: Իսկ մեր կառավարութիւնը այժմ ամէն ջանքով աշխատում է կր-